

Տպագրում ենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի միջազգային գործերի կոմիտեի հայտարարությունը և այդ նույն կոմիտեում հայտարարության նախագծի քննարկման ժամանակ Հայաստանից և ԼՂԻՄ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների հայտարարությունը: Այս ձևով ընթերցողն ինքը հնարավորություն ունի բաղդատելու, համադրելու այդ երկու հայտարարությունները և համապատասխան եզրակացությունների հանգելու:

Խմբագրությունը թերթի երեկվա համարում արտահայտել է իր կարծիքը ԽՍՀՄ արտգործմինիստրության համանման հայտարարության մասին, և այդ կարծիքը լիովին տարածվում է նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի միջազգային գործերի կոմիտեի հիշյալ հայտարարության վրա:

# ՀԱՐԳԵԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՄՈՍԿՎԱ, 21 նոյեմբերի (Արմենպրեսի հատուկ թղթակիցներ Լ. Ազրոյան, Ջ. Բալազոզյան): Ինչպես հայտնի է, «ԽՍՀՄ արտգործմինիստրությունում» հաղորդման մեջ «Պրավդան» հայտնել էր, որ նոյեմբերի 19-ին ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Ա. Բեսամերտնիխը հրավիրել էր ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի դեսպան Ջ. Մեթուկին և նրան համապատասխան հայտարարություն արել Լեոնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի ընդունած բանաձևի առնչությամբ:

Նույն օրն էլ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի միջազգային գործերի կոմիտեն իր նիստում քննարկեց սենատի արտաքին գործերի հանձնաժողովի բանաձևի հարցը: Նիստում ելույթ ունեցան կոմիտեի անդամներ Ֆ. Բուդյակին, Գ. Բորովիկը, Ս. Համբարձումյանը և ուրիշներ: Խնդրի առնչությամբ իրենց վերաբերմունքն արտահայտեցին Հայաստանից և ԼՂԻՄ-ից դեպուտատներ Լ. Հարությունյանը, Ջ. Բալաջանը, Հ. Պողոսյանը, Վ. Գրիգորյանը:

Նրանք մասնավորապես քննադատեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի միջազգային գործերի կոմիտեի հայտարարության նախագիծը, պահանջելով նաև նախքան նմանօրինակ հայտարարություններով հանդես գալը հրապարակել ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի բանաձևի լրիվ տեքստը: Հայաստանի և ԼՂԻՄ-ի պատվիրակությունները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի նախագահությանը հանձնեցին հետևյալ հայտարարությունը, որի մեջ մասնավորապես ասվում է. «Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի ընդունած բանաձևի և ԽՍՀՄ արտգործմինիստրության հայտարարած բողոքի կապակցությամբ Հայաստանից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները հայտարարեցին, որ ՄԱԿ-ի կանո-

նադրությանը, Հելսինկիի պայմանավորվածություններին, միշտ այլ միջազգային իրավական ակտերին համապատասխան, որոնց ներքո դրված է ԽՍՀՄ-ի ստորագրությունը, պետությունների ամբողջ միջազգային միավորումը և նրանցից յուրաքանչյուրն առանձին պարտավոր են ժողովուրդների այդ իրավունքը հարգել ոչ միայն իրենց սահմաններում, այլև եռանդագին նպաստել դրա կենսագործմանը ինքնորոշման շարժումներին աջակցելու միջոցով:

Պետությունների նշված միջազգային միավորումները բացառում են այս կամ այն ժողովրդի ինքնորոշման իրավունքը պաշտպանող պետությունների գործողությունները որպես այն պետության ներքին գործերին միջամտություն որակելու հնարավորություն, որից կախված է այդ իրավունքի իրականացումը: Այսպես, օրինակ, պետությունների ներքին գործերին միջամտելու, նրանց անկախությունն ու սուվերենությունը պաշտպանելու անհրաժեշտության մասին դեկլարացիայում ուղղակի ասվում է, որ «բոլոր պետությունները պետք է հարգեն ժողովուրդների և ազգերի ինքնորոշման ու անկախության իրավունքը, և այդ իրավունքը պետք է իրականացվի ազատորեն ու առանց որևէ արտաքին ճնշման, լիովին կիրառելով մարդու իրավունքների ու ազատությունների հիմունքները»:

Այս դրույթը հավաստված է նաև պետությունների ներքին գործերին միջամտելու և ինտերվենցիայի անթույլատրելիության մասին դեկլարացիայում, որը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունել է 1981 թվականի դեկտեմբերի 9-ին, որի մեջ ուղղակի ասվում է, որ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը չի կարող հակադրվել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին: Հավաստելով չմիջամտելու սկզբունքը, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան դրա հետ մեկտեղ ուղղակի նշել է, որ այդ սկզբունքը ներառում

է ամեն տեսակ բռնի գործողություններից ձեռնպահ մնալու պետությունների պարտականությունը, որոնք ժողովուրդներին զրկում են «նրանց ինքնորոշման, ազատության ու անկախության իրավունքից», և «պետությունների իրավունքն ու պարտականությունն է լիովին զորավիգ լինել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին»:

Ելնելով պետությունների ներքին գործերին միջամտության և ժողովուրդների ինքնորոշման հարաբերակցության նման ըմբռնումից, Խորհրդային Միությունն իր գոյության առաջին օրերից մինչև այսօր եռանդագին պաշտպանել է ժողովուրդների ինքնորոշման պահանջները, մերժելով ներքին գործերին միջամտելու ամեն մի մեղադրանք: Եթե հետևենք ԽՍՀՄ արտգործմինիստրության բողոքի տրամաբանությանը, ապա այդ դեպքում հարկ կլինի նշել, որ ԽՍՀՄ-ը այդ բոլոր դեպքերում միջամտում էր ուրիշ պետությունների ներքին գործերին, որին մենք չենք կարող համաձայնել:

Մենք ափսոսանք ենք հայտնում, որ հենց այժմ՝ վերականգնման և նոր մտածողության ժամանակաշրջանում ժողովուրդների ինքնորոշման գաղափարի պաշտպանությունը դիտվում է իբրև միջամտություն ԽՍՀՄ-ի ներքին գործերին:

Իսկ ինչ վերաբերում է գործի փաստական կողմին, ապա մենք կկամենայինք նշել, որ մինչև այժմ ԼՂԻՄ-ի ինքնորոշման օրինական պահանջների պատասխանը եղել են Սումգայիթի ցեղասպանության գործողությունը և հայկական ջարդերը Ադրբեջանական ԽՍՀ-ի այլ քնակավայրերում, Հայկական ԽՍՀ-ի երկամյա շրջափակումը, Լեոնային Ղարաբաղի մեկուկեսամյա պաշարումը և «անկանխատեսելի հետևանքներով» մշտապես սպառնալը», — ասվում է Հայաստանի և ԼՂԻՄ-ի պատգամավորությունների հայտարարության մեջ: